ՉԵՐՔԵԶԱՅԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1915թ. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ

Օսմանյան կայսրության նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ճնշման գործում տարբեր ժողովուրդներին իրար դեմ հրահրելու օսմանյան կառավարողների քաղաքականությունը որոշ դեպքերում հաջողությամբ էր պսակվում, հնարավորություն ընձեռելով եվրոպական պետությունների առաջ հայերի, հույների, բուլղարների կոտորածները ներկայացնել որպես այդ ժողովուրդների և քրդերի ու չերքեզների միջև ընդհարման արդյունք, այլ ոչ թե օսմանյան պետության քաղաքականության հետևանք: Նման քաղաքականության շնորհիվ Օսմանյան կայսրությունը հնարավորություն ստեղծեց 1878թ. Բեռլինի կոնգրեսում հայերին ներկայացնել որպես չերքեզների և քրդերի հարձակումներից տուժող մի ժողովուրդ և պարտավորվեց հայ բնակչությանը նրանցից պաշտպանելու միջոցներ ձեռնարկել:

Հայոց ցեղասպանությունն իրականացնող «Հատուկ կազմակերպության» շարքերում չերքեզների դերը, իրոք, նշանակալի էր:[1] Ներկա հոդվածում, մասնավորապես, հիմնական ուշադրությունը դարձվում է 1915թ. հայերի տեղահանությանը և Դեր-Զորում ու Ռաս-ուլ-Այնի կոտորածներում ներգրավված չերքեզական ջոկատների գործունեությանը:

«Հատուկ կազմակերպության» արևելյան նահանգների բաժանմունքին կից հայերի տեղահանությունն իրականացնելու նպատակով ջոկատների կազմավորումը սկսվեց 1914թ. օգոստոսի երկրորդ կեսից, ընդ որում այդ ջոկատների համալրման համար օգտագործվում էին երեք աղբյուր՝ քրդական աշիրեթները, մարդասպանության և նման հանցանքների համար դատապարտված բանտարկյալները և Կովկասից ու Ռումելիայից ժամանած մուհաջիրները:[2]

Սակայն «Հատուկ կազմակերպության» հիմնական ջոկատները կազմված էին նախկինում Օսմանյան կայսրություն գաղթած հյուսիսկովկասյան ցեղերին պատկանող անձանցից, որոնց կոչում էին «չերքեզ» ընդհանուր անվանումով: Չերքեզներն ակտիվ ներգրավվում էին նաև ժանդարմերիայի ջոկատների մեջ, որոնց վրա էր դրված բանակում ծառայող հայերի հավաքագրումն ու ոչնչացումը: Այդ փաստն իր արտացոլումն է գտել նաև ցեղասպանության մասին հուշապատումներում: Այսպես, Վ. Սվազլյանի «Մեծ Եղեռնը արևմը-

տարեսույց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» գրքում ներկայացվում է երգի մի հատված, որտեղ հայ զինվորն աղաչում է չերքեզին չսպանել իրեն. (Kıyama, çerkez, kıyama tatlı canıma: Yeni nişanlım var karalar bağlar):[3] 1915թ. հունիսի 27-ին Կայսերիում տեղակայված գնդի հրամանատարից Անկարայի բանակային կորպուսի հրամանատարին ուղված հեռագրում նույնպես նշվում է Յոզգաթի հայկական գյուղերի վրա չերքեզական հեծելազորի հարձակման և հայերի նկատմամբ իրականացված դաժանությունների մասին:[4]

Չերքեզական ջոկատներից մեկը ղեկավարում էր նախկինում Իթթիհատի ֆիդայի, երիտթուրքերին ընդդիմադիր Զեքքի բեյի մարդասպան Չերքեզ Ահմեդը, որը կազմակերպել էր օսմանյան խորհրդարանի երկու հայ պատգամավորների՝ Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենգուլյանի սպանությունը, ինչի համար Դամասկոսում Ջեմալ փաշայի կողմից մահապատժի դատապարտվեց:[5] Հայոց ցեղասպանության ժամանակ գործած դաժանությունների համար, թուրք գեներալ Ալի Ֆուսդ Էրդենը Չերքեզ Ահմեդին և «Հատուկ կազմակերպության» չերքեզական մեկ այլ ջոկատի հրամանատար Հալիլին անվանում է «արյունալի քոմիտաջիներ»:[6]

Չերքեզ Ահմեդն ու Հալիլը «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերի գրեթե միակ ղեկավարներից էին, որոնք արժանի պատիժ կրեցին հայերի տեղահանության ժամանակ իրագործած կոտորածների համար: Մեծ եղեռնի պատմության մեջ Հալիլի անվան հետ է կապված Արդվինի հայերի մասսայական կոտորածի կազմակերպումը: Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի վկայությամբ, ազգությամբ չերքեզ Հալիլն այնպիսի դաժանություններ էր արել Արդվինում, որ երեք տարի անց այդ քաղաք ժամանած Ահմեդ Ռեֆիկը նշում է, թե «խեղճ հայ կանայք թուրքական համազգեստով մարդուն տեսնելուց, սարսափահար փախչում ու թաքնվում էին»:[7] Իսկ Չերքեզ Ահմեդն աչքի ընկավ Վանի շրջակա գյուղերում հայերի կոտորածների կազմակերպմամբ: Հետագայում գովաբանելով իրեն, նա նշում էր. «... ես շրջեցի Վանն ու մերձակա գյուղերը: Այսօր դուք այնտեղ ոչ մի հայ չեք կարող տեսնել»:[8]

Սակայն Մեծ Եղեռնի պատմության մեջ նրանք ավելի հայտնի դարձան Դիարբեքիր ուղարկված երկու հայ պատգամավորների սպանությամբ: Ֆալիհ Ռիֆքի Աբայի վկայությամբ, Չերքեզ Ահմեդի և Հալիլի ձերբակալության մասին Ջեմալ փաշայի հրամանը պայմանավորված էր նրանով, որ վերջինս Դամասկոսում հանդիպելով Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենգուլյանի հետ, երաշխավորել էր նրանց անվտանգությունը: Էսքիշեհիրում Չերքեզ Ահմեդի և Հալիլի ձերբակալությունից հետո, նրանց իրերում՝ հայ սպանված կանանցից թալանած, մեծ քանակությամբ ոսկե և արծաթե իրեր հայտնաբերվեցին:[9] Չնայած Թալեաթի միջամտությանը, Ջեմալ փաշայի հրամանի համաձայն երկու քոմիթաջիները Դամասկոսում կախաղան հանվեցին:[10] Ուշագրավ է, որ Զոհրապի և Սերենգուլյանի սպանությունից մի քանի ամիս առաջ, Ահմեդը, երկու այլ հրոսակախմբերի չերքեզ հրամանատարների հետ, հանդիպել էր Ջեմալ փաշային, առաջարկելով Չորրորդ բանակի շրջանում կազմակերպել խոշոր հրոսակախումբ և իսպառ բնաջնջել այդ շրջանում գտնվող բոլոր հայերին, սակայն Ջեմալ փաշան մերժել էր այդ առաջարկը:[11]

1915թ. աշնանը Գուրեմե և Աբա Քյոփրյու տեղամասերում Դանիյալի (Չապսուգ) հրամանատարությամբ «Հատուկ կազմակերպության» չեր-

քեզական ջոկատներից մեկը, թուրք զինվորների հետ միասին կազմակերպեցին Ուրֆայի և մոտակա գյուղերի երիտասարդ հայերի սպանությունը:[12]

Հայերի ցեղասպանության ականատես Ամեդ Ռեֆիկի վկայությամբ. «Հայերի համար ամենասարսափելին Փոզանթի արտաքսումն էր: Նրանք սարսափահար էին լինում այնտեղ ջոկատների հարձակմանը ենթարկվելու մտքից անգամ: Ո՞ր ջոկատների մասին է խոսքը: Դրանք «Թուրանի քաղաքականություն», «Իսլամի միավորում» անվան տակ Կովկաս ուղարկվելիք իթթիհատական ջոկատներն էին»:[13] Չերքեզներից կազմված և Կովկաս ուղարկվող ջոկատները զգալի դեր խաղացին Էրզերումի վիլայեթի հայերի տեղահանության գործում:

Մարաշի և մոտակա գյուղերի հայերի շարասյունը Դեր-Զոր էր ուղարկվել դարձյալ չերքեզական ջոկատի ուղեկցությամբ: Շարասյունը ժամանել էր Հաբուր գետի վրա գտնվող Սուվար քաղաք, ուր մուդիրը նույնպես չերքեզ էր: Մուդիրի կարգադրությամբ հայերի վերջին փողերը հավաքվեցին, և Հաբուրի ափին մեծ ճամբար ստեղծվեց, ուր ժամանեցին Այնթապի, Հաջնի, Ալբիստանի հայերի շարասյունները: Տեղահանված հայերից մեկի՝ Մանուկ Կիրմենիկյանի վկայությամբ, 1916թ. հոկտեմբերի վերջին մուդիրի հրամանով այդ ճամբարի հայերը պատրաստվում էին շարունակել իրենց ճանապարհը դեպի Դեր-Զոր, սակայն շարժվելու նախօրեի երեկոյան «չերքեզներից և արաբներից կազմված հրոսակախումբը, զինված ամեն տեսակի զենքով, շրջապատեց շարասյունը: Տեղահանվածների ամբողջ ունեցվածքը, ընդհուպ մինչև ներքնաշորերը, մի մեծ կույտի դիզվեցին: Չերքեզներն իրենց վերցրին ամենալավը, ինչով բարձեցին ձիերին, մնացորդներն էլ՝ արաբներին»:[14] Ինքը՝ Մանուկը, երեք ընկերների հետ, փրկվել էր մի չերքեզի օգնությամբ:

Ծիղաղյեյում, Դեր-Զորի մյութեսարիֆ չեչեն Զեքքի բեյի կարգադրությամբ, չերքեզական հրոսակախումբը կազմակերպել էր 15 000-անոց հայերի շարասյունի ոչնչացումը:

Արևմտյան Անատոլիայի «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերի հրամանատարներից հայտնի են հյուսիսկովկասյան ծագում ունեցող Սարի Էդիպը, Դայը Մեսութը, Յահյա քափթանը, Քարա Արսլանը և Իվսիզ Ռեջեփը: Հետագայում նրանք բոլորը հայերի տեղահանություններին մասնակցության մեղադրանքով հետապնդումների ենթարկվեցին անգլիացիների կողմից, ավելի ուշ՝ դարձան Էգեյան շրջանում քեմալական նորաստեղծ ուժերի հիմնադիրներ:[15]

Սևծովյան ավազանում հայերի տեղահանության գործում ակտիվ դեր խաղացին հյուսիսկովկասցիներ՝ գնդապետ Հալիթը, հետագայում ազգայնական շարժման ակնառու գործիչ Յահյա Քահյան և Ամեթ Բարութչուն: Յահյա Քահյան և Ամեթ Բարութչուն կազմակերպել էին Տրապիզոն քաղաքի և վիլայեթի հայերի տեղահանությունն ու ոչնչացումը: Տրապիզոնի հայերի տեղահանության կազմակերպիչներից էր նաև այդ շրջանի վալի, չերքեզ Բեքիր Սամին:[16]

Այսուհանդերձ, վերլուծելով 1915թ. Հայոց ցեղասպանության պատմությունը, կարելի է փաստել, որ ընդհանուր առմամբ չերքեզական ջոկատների և հրոսակախմբերի դերը Արևմտյան Հայաստանում հայերի տեղահանման և ոչնչացման գործում մեծ չէր, քանի որ այդ նպատակի համար թուրքական կառավարությունն օգտագործում էր առաջին հերթին քրդերին, որոնց ձեռքերով էլ, հիմնականում, ոչնչացվեց հայ բնակչությունը: Չերքեզ-

ների օգտագործումը հայերի մասսայական կոտորածներում ավելի ակնհայտ էր Դեր-Զորի և Ռաս-ուլ-Այնի իրադարձություններում: Այդ տարածաշրջաններում չերքեզների վերաբնակեցումը տեղի ունեցավ 1877-78թթ., ռուս-թուրքական պատերազմից հետո, ու նրանք, 1915թ., փաստորեն, հանդիսանում էին օտար տարր շրջակա արաբ բնակչության համար և ատելությամբ էին լցված բոլոր քրիստոնյաների նկատմամբ, հիշողության մեջ դեռևս վառ պահելով Կովկասյան պատերազմը և ռուսների կողմից կազմակերպված հյուսիսկովկասցիների մասսայական արտագաղթը: Ուշագրավ մի հանգամանք ևս. պատերազմը համակրանք չէր վայելում չերքեզների շրջանում, որոնք չէին ցանկանում զոհվել մի երկրի համար, որը դեռևս չէին ընկալում որպես հայրենիք: Այդ պատճառով բանակ զորակոչված չերքեզների շրջանում դասալքությունը մեծ չափերի էր հասել և երկրի ներսում թուրքական իշխանությունների կողմից նրանց օգտագործումն ավելի արդյունավետ էր:

Սիրիական անապատում հայերի մասսայական ոչնչացումը սկսվեց 1916թ. գարնանը: «...Եվ այդ անապատներում կազմակերպվեցին երեք ասսկալի ջարդեր, առաջինը՝ Ռաս-ուլ-Այնում, որտեղ զոհվեց մոտավորապես 70 000 հոգի, երկրորդը՝ Ինքիլիիում, ուր համախմբված էին 50 000 հոգի, որոնք հիմնականում աշխատում էին Բաղդատի երկաթուղու թունելների կառուցման վրա: Իսկ երրորդը, որն ամենազարհուրելին եղավ՝ Դեր-Զորում, ուր Զեքքի բեյը 200 000 հայ սպանեց», - նշում է իրադարձությունների ժամանակակից Արամ Անտոնյանը:[17]

Սիրիական անապատում հայերի ոչնչացումը սկսվեց Ռաս-ուլ-Այնի ճամբարից: Այդ ծրագրի իրականացման համար «Հատուկ կազմակերպության» հրահանգով Ռաս-ուլ-Այնի մոտ գտնվող չեչենական Սաֆա գյուղի երիտասարդությունից ստեղծվեց հատուկ ջոկատ, որը ղեկավարում էր Արսլան բեյը: Այդ գյուղից էր նաև Ռաս-ուլ-Այնի և Դեր-Զորի հայերի ոչնչացման կազմակերպիչներից մեկը, ջրհորներում հայ երեխաների այրման հրաման արձակած Ահմեթ Սելիմը: Սաֆա գյուղի չեչենների հրոսակախումբը զինվել էր Հալեպի բանակային պահեստներից: «Ռաս-ուլ-Այնի եղերական դեպքերի հրամանը տրվել էր անմիջապես Հալեպից: Այս հրամանը տրված էր այդ հրոսակախմբի պետերին: Նրանցից մի քանիսը եկել էին Հալեպ և հանդիպել կուսակալ Մուսթաֆա Աբդուլհալիք բեյի հետ: Նրանց վերադարձից չորս-հինգ օր հետո՝ Ռաս-ուլ-Այնի քայմաքամը (Քերիմ Ռէֆի բեյ) ծածկագրով իմացավ հասնելու և հրահանգներ ընդունելու մասին»:[18]

Գերմանացի հյուպատոս Ռեսլերը վկայում էր, որ դեռևս մինչև մասսայական ոչնչացման սկիզբը, Ռաս-ուլ-Այն ժամանող տեղահանվածների շարասյունները «թալանվում էին մերձակայքում բնակվող չեչենների և ժանդարմների կողմից»:[19]

Ռաս-ուլ-Այնում հայերի մասսայական կոտորածը սկսվեց 1916թ. մարտի 17-ին և տևեց մինչև հունիս, երբ բոլոր հայերը ոչնչացվեցին, և այդ շրջանի «Հատուկ կազմակերպության» պատասխանատու Ադիլ բեյը, իր պարտականություններն ավարտված համարելով, մեկնեց Հալեպ: Ռաս-ուլ-Այնի մասսայական կոտորածի մյուս կազմակերպիչ չեչեն Զեքքի բեյը նշանակվեց Դեր Զորի կուսակալ, հրահանգ ստանալով այնտեղ նույնպես իրականացնել Ռաս-ուլ-Այնի կոտորածը: Սակայն Դեր-Զորում մասսայական կոտորած կազմակերպելն անհամեմատ ավելի դժվար էր, քանի որ

Դեր-Զորը հանդիսանում էր տարագրված հայերի ամենամեծ ճամբարը: Այդ իսկ պատճառով Զեքքի բեյը «ստիպված էր Դեր-Զոր կանչել Ռաս-ուլ-Այնի ջարդերն իրականացնող բոլոր չեչեններին, որոնք գնացել էին միանալու Սեֆայի իրենց ազգակիցներին: Բայց դարձյալ ջարդարարները սակավ էին զոհերի համեմատ: Հասկանալով, որ չեչենների միջոցով գործը չպիտի լրանա, Զեքքի բեյը Դեր-Զորի շրջակա արաբ աշիրեթներին խոստացել էր զոհերի հագուստներն իրենց տալ, եթե ջարդերին օգնեն: Եվ նրանք ընդունել էին: Մեծ մասը նրանց ձեռքով ջարդվեց»:[20]

Դեր-Զորի ջարդերը տևեցին 1916թ. ապրիլից մինչև հունիս և ընթացան կուսակալ Զեքքի բեյի անմիջական հսկողության տակ: Ամեն օր հայերին մի քանի հարյուր հոգիանոց խմբերով տանում և ոչնչացնում էին: Դեր-Զորի ջարդերում աչքի ընկավ հրոսակախմբերից մեկի առաջնորդ Յոմար ալ-Խակիմը, որի երակներում կիսով չափ չերքեզական արյուն էր հոսում: Դեր-Զորի կոտորածներից հետո նա հետապնդում էր այդ շրջաններում հրաշքով փրկված հայ բնակչության բեկորներին: 1918թ., ֆրանսիական զորքերի Սիրիա մուտք գործելուց հետո, նա ձերբակալվեց հայ լեգիոներների կողմից և կախաղան բարձրացվեց Դամասկոսում:

Դեր-Զորի և Ռաս-ուլ-Այնի կոտորածներից բացի չերքեզական հրոսակախմբերը մասնակցեցին Շիդադյեյում տեղի ունեցած հայերի մասսայական սպանդին: Շիդադյեյի իրադարձությունների մասին վկայում է գերմանացի հյուպատոս Ռեսլերը, որն իր զեկույցում ներկայացնում է այդ կոտորածի մանրամասն պատկերը, հենվելով մազապուրծ հայերի վկայությունների վրա: «Բազմօրյա թափառումներից հետո նրանք [հայերը] կանգնեցին Խաբուր գետի ափին՝ Շիդադյեյի մոտ: Մյուս օրը արագ ժամանեց չերքեզների հրոսակախումբը և շրջապատեց շարասյունը: Չերքեզները խլեցին հայերից ամենը, ինչ կար նրանց մոտ և նույնիսկ մերկացրին հայերին: Փողերը, և զարդերը չերքեզները պահեցին իրենց մոտ, իսկ հագուստները տվեցին արաբներին: Այնուհետև բոլոր հայերին՝ մերկ տղամարդկանց, կանանց և երեխաներին քշեցին դեպի Քարաղաղ, ուր հասան երեք ժամ անց: Քարաղաղի հյուսիսային լանջին, բլրապատ բարձրահարթում նրանց կանգնեցրին: Այստեղ չերքեզները կացիններով ու սրերով հարձակվեցին իրենց զոհերի վրա, մինչև արյունը չհոսեց վտակների պես և ամբողջ դաշտավայրը պատվեց դիակներով: Հովսեփը ականատես էր, թե ինչպես Դեր-Զորի մյութեսարիֆը ձիասայլից հետևում էր սպանդին և ոգևորում մարդասպաններին, իսկ զինվորները շրջապատել էին դաշտավայրը... Այն բանից հետո, երբ ամբողջ գունդը մի քանի անգամ անցավ դիակների վրայով և նրանցից ոչ ոք չշարժվեց՝ չերքեզները հեռացան»:[21]

Ռաս-ուլ-Այնում և Դեր-Զորում հայերի մասսայական ոչնչացումը, փաստորեն, նշանակում էր Հայոց ցեղասպանության ծրագրի հիմնական մասի իրականացում: 1916թ. մայիսին Բեռնում ռուս դեսպանորդ Ա. Մանդելշտամը զեկուցում էր. «Փոքր Ասիայում հայ բնակչություն գրեթե չկա՝ նրանք կամ ոչնչոցված են, կամ տեղահանված և միայն բեկորներն են ապաստան գտել ղզզըլբաշների մոտ: Գյուղերում մահմեդական բնակչությունը զոհունակություն է հայտնում, որ հարստացել է հայերի հաշվին»:[22]

Այսպիսով, 1915թ. Հայոց ցեղասպանության ժամանակ չերքեզների օգտագործումը թույլ տվեց թուրքական իշխանություններին լրացուցիչ զինվորական ուժեր չկանչել ռազմաճակատներից: Չերքեզները հանդիսա-

ցամ թուրքական կառավարության ծրագրի իրականացման լրացուցիչ, հարմար միջոց:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս Авакян А. Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999, стр. 67-86; ինչպես նաև, Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции, Ереван 2001, стр. 224-232.
[2] Տե՛ս Taner Akçam. Insan Hakları ve Ermeni Sorunu Ittihat Terakki'den Kurtuluş Savaşına, Istanbul, 1999, s. 227.
[3] Տե՛ս Ավագյան Վերժինե. Մեծ Եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում, Երևան, 1997, էջ 9:
[4] Տե՛ս Taner Akçam. նշվ. աշխ., էջ 238:
[5] Տե՛ս Ahmed Refik Altınay. Iki Komite Iki Kıtal, Istanbul, 1992, ss. 42-43.
[6] Տե՛ս Zurcher E. J. The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926, Leiden, 1984, p. 13.
[7] Տե՛ս Ahmed Refik Altınay. Iki Komite Iki Kıtal, Istanbul, 1992, ss. 42-43.
[8] Նույն տեղում, էջ 42:
[9] Տե՛ս Falih Rıfki Atay. Zeytindağı, Istanbul, 1981, s. 67.
[10] Նույն տեղում:
[11] Տե՛ս Ahmed Refik Altınay. Iki Komite Iki Kıtal, Istanbul, 1992, ss. 42-43.
[12] Տե՛ս Գահուէճեան Եղիա. Յուշեր Ուրֆայի 1915թ. հերոսամարտի և յետագայ իրադարձութիւններու մասին, Երևան, 1995, էջ 22-23:
[13] Տե՛ս Ahmed Refik Altınay. Iki Komite Iki Kıtal, Istanbul, 1992, s. 39.
[14] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии, Ереван, 1995, стр. 405.
[15] Տե՛ս Таner Акчам. Турецкое национальное "Я" и Армянский вопрос, М. 1995, стр. 137-138.
[16] Տե՛ս Զաւէն Արքեպ. Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ 1974, էջ 22:
[17] Տե՛ս Անտոնյան Արամ. Մեծ Ոճիրը, Երևան 1990, էջ 18:
[18] Նույն տեղում, էջ 54-55:
[19] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)... стр. 224.
[20] Տե՛ս Անտոնյան Արամ. Մեծ Ոճիրը, Երևան 1990, էջ 57:
[21] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)... стр. 403-404.
[22] Տե՛ս Архив Внешней Политики Российской Империи, ф. 151, Политархив, оп. 482, д. 4073, 1914-17 гг., л. 93.

Резюме

Участие черкесских отрядов в геноциде армян 1915г.

Арсен Авакян

Черкесские отряды составляли основу создаваемых при отделении восточных вилайетов "Особой организации" отрядов, призванных осуществить депортацию армян из мест проживания в сирийскую пустыню. В истории геноцида 1915г. известны имена Черкеса Ахмеда и Халиля, организовавших депортацию и массовое уничтожение армян Артвина и Ванского вилайета, а также организовавшие убийство Григора Зограва и Варлкеса Серенгулянa. Большую роль в массовом уничтожении армян Эрзерумского

вилайета сыграли черкесские отряды, известные под названием "Единение Ислама". В Трабзоне и вилайете действовали отряды Яхья Кяхья и Ахмеда Барутчу.

Наиболее примечательно участие черкесов в истории геноцида армян 1915г., когда их руками турецкие власти осуществили массовое уничтожение депортированного армянского населения в Рас-уль-Айне, Тер Зоре и Шидадье.

Участие черкесов в геноциде армян явилось основной причиной их массовой вовлеченности в националистическое движение 1919-1922гг.

Summary

The Participation of Chircassian Bands in the Armenian Genocide of 1915.

Arsen Avakyan

The Circassian bands were the keystone of the "Special Organisation" bands created by the branch of the East vilayets calling upon to bring about the deportation of the Armenians from the places of habitation to the Syrian desert. In the history of Genocide of 1915 are famous the names of Circcassians Ahmet and Halil, which organised the deportation and mass killings of Armenians from the vilayets of Artvin and Van, as well as the assassination of Grigor Zohrab and Vardkes Serengulyan. The main role in the mass killings of Armenians of the Erzurum vilayet was played by Circassian's bands known by the name "Unity of Islam". In Trabzon and in vilayet had been functioning the bands of Yaghya Kaghya and Ahmed Barutch.

More notable participation of Circassians in the history of the Genocide of Armenians in 1915 is when by their hands Turkish authorities brought about the mass killings of the deported Armenian population in Ras-ul-Ayn, Ter Zor and Shidadye.

The participation of Circassians in the Armenian Genocide were the main reason of their mass involvement in the national movement of 1919-1922.